Հարգելի պարոն/տիկին

Ի պատասխան ձեր 21.12.2015թ. – ի հարցմանը, ձեզ եմ ներկայացնում փաստաթղթերի փաթեթ, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1. համատիրության ընդհանուր ժողովների մասին տեղեկատվություն – 2015թ. բյուջեի վերաբաշխում
2. քաղվածքներ համատիրության վարչության նիստերի արձանագրություններից մայիս ամսից մինչ ձեր հարցման օրը

3. Սեփականատերերի անվանական վճարումների և պարտքերի ցուցակների գծով տեղեկատվության տրամադրումը մերժում եմ ամբողջությամբ հիմնվելով Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 8 – րդ հոդվածի վրա – Տեղեկատվության ազատության սահմանափակումները - Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը – մեր դեպքում հենց այս կետն է մերժման պատճառներից մեկը:

Բացի այդ, սույն տեղեկությունները կարող են հրապարակվել միայն սեփականատերերի մեծամասնության համաձայնությամբ կազմակերպված աուդիտի դեպքում:

4. Քաղվածքներ ամսական ամփոփ հաշվետվությունից – այս կետի գծով տեղեկատվության տրամադրումը ես նույնպես մերժում եմ ամբողջությամբ: ԻԱԿ – ը իրենից ներկայացնում է մի կառույց, որը պետք է պահանջի այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը չի հրապարակվում կամ թաքցվում է այս կամ այն պատճառով: Իսկ համատիրության քաղվածքները ամսական ամփոփ հաշվետվություններից հրապարակվում են յուրաքանչյուր ամիս օրենքով սահմանված ժամանակահատվածում և հայտնվում են շենքերի յուրաքանչյուր մուտքի կողքը գտնվող իրազեկման վահանակի վրա, որը սեփականատերերին իրազեկելու օրինական ձև է հանդիսանում: Ուստի անիմաստ եմ գտնում տրամադրել տեղեկություններ, որոնք ամեն ամիս պատշաճ կերպով հրապարակվում են:

Մեկ անգամ ևս շնորհակալ եմ ձեր հարցման համար և հուսով եմ, որ հնարավորինս կարողացա օգնել ձեզ:

Ամենայն հարգանքով

Համատիրության կառավարիչ՝ Հովհաննես Արսենյան

22.01.2016թ.